№ 236 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 — 1903 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 № 236

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Ձայնագրութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Ձանազրութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զրոյց ընթերցողի հետ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ ժողովրդական երգեր. Գործարանական աշխարհից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռաւոր Արեւելքում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՏԱՒԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Խաղաղութեան XII համաշխարհային կոնգրէսը։

ԶՐՈՅՑ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏ

Լրագիրը մշտական զրոյց է անում իր ընթերցողի հետ և յայտնում է իր հայեացքները ընթացիկ գործերի մասին։ Եւ որովհետև լրագրական էջերը բաց են իրերի հրապարակական քննութեան համար, ուստի ընթերցող հասարակութիւնը հնարաւորութիւն ունի մասնակցելու հերթական գարձած խնդիրների քննութեանը։ Մամուլի կարեւոր առաւելութիւններից մէկը հէնց այն բանի մէջն է, որ նա ապարէզ բանալով այդ հրապարակական քննութեան համար՝ դարձնում է հասարակական խնդիրները ընդհանրութեան սեփականութիւն, իսկ նրանց մշակումը հանրային մտածողութեան արգասիք։

Ուստի կարեւոր է, որ բոլոր այն անձինք, որոնք կարող են նպաստել լրագրական նիւթ դարձած խնդիրների ուսումնասիրութեանը և քննութեանը, առաջ գան իրանց դիտողութիւններով և իրանց քննադատական նկատողութիւններով լրացնելու այն, ինչ որ անում է լրագիրը իր ձեռքի տակ եղած միջոցներով։

Մենք յաճախ լսում ենք, որ այստեղ կամ այնտեղ կան խելացի գլուխներ, որոնք ունեն շատ կարեւոր ասելիքներ հասարակութեանը և կարող են օգտաւէտ արդիւնքներ առաջացնել իրանց խորհրդածութիւններով և փորձառութեամբ։ Եթէ կան այդպիսիները—շատ մեծարժէք է. բայց ինչո՞ւ են լռում, ինչո՞ւ չեն հանդէս գալիս իրանց խօսքով ու գործով, ինչո՞ւ են թաղցնում հասարակութիւնից իրանց խոհերը և ծրագիրները։ Իւրաքանչիւր անհատ, մանաւանդ այնպիսին, որ օժտված է ազանդով և խելքով, պարտաւոր է, որքան կարող է, օգտաւէտ լինել իր շրջապատող հասարակութեան համար։ Եթէ մի լրագիր անլարմար է որ և է պատճառով, կարելի է դիմել մի ուրիշ լրագրի։ Եթէ այդ էլ անյարմար է, կարելի է հանդէս գալ գրքով, կենդանի խօսքով, գիտնական ընկերութեան մէջ կարդացած զեկուցմամբ և ցոյց տալ այն օգտաւէտ բաները, որ նա մշակել է իր ուղեղում հասարակութեան մէջ բարիքներ ունենալու նպատակով։ Վերջին դէպքերում լրագիրը կօգտվի գրքերից և զեկուցումներից և կը յայտնէ իր կարծիքները, որոնցով կը նպաստէ կենսական խնդիրների մշակութեան գործին։

Մեր զրոյցը ընթերցողի հետ մշտական է և մենք ուրախ ենք արձանագրել մոքի կատարած ամեն մի նոր առաջադիմութիւն, որպէս զի կարողանանք մեր ստանձնած գերը կատարել բաւարար կերպով հասարակութեան առաջ։ Մենք կը ցանկայինք, որ ամեն մարդ, որքան կարող է, աջակցէ հասարակական մտածողութեան զարգացման գործին և չը բաւականանայ խոստումներով ու խորհրդաւոր բացականչութիւններով, այլ հանդէս գայ որոշակի խօսքով և այդպիսով մասնակցէ այն գործին, որին նուիրել ենք մենք մեր բոլոր ոյժերը։ Ընթերցող հասարակութիւնը ա,դպիսով իր ներկայացուցիչների բերանով կը պահպանէ մշտական կենդանի կապ լրագրի հետ և լրագրի զրոյցը կը դառնայ լիակատար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ
(Խմբական երգեցողութիւն)

II

Պէտք է աչքի առաջ ունենալ այն՝ որ ամէն մի ձայն, վատ թէ լաւ, կարելի է զեղեցկացնել, համեմատ բնութիւնից իրան տուած յատկութիւնների։ Մենք չենք ասում մշակել ձայները վերջին կատարելագործութեան հասցնելու համար. ոչ, ներկայ դէպքում այդ անկարելի է, այլ մի քիչ կոկել, կոլորեցնել և որա համար ոչ մի ասանձին աշխատութիւն է պէտք և ոչ էլ մի երկար ժամանակ, միայն մի քանի ամիս։

Գեղարուեստի նրբութիւնից զուրկ են եղել մինչեւ օրս հասարակութեան առաջ գրված հայերէն խմբական համերգները. նրանք տուել են հասարակութեան միայն զուարճութիւն, այն զուարճութիւնը, որ մենք զգում ենք մի որ և է խնճոյքի ժամանակ. այդ համերգները չեն հասել գեղարուեստական այն կէտին, որ հանդիսականներին, փոխանակ սովորական զուարճութիւն պատճառելու, դիպչեն նրանց հոգեկան թելերին, քաշ տան, տանեն, ապրեցնեն իրանց հետ մի ինչ որ երկնային աշխարհում, որով հանդիսականը առացած լինի մի որոշ չափի էսթէտիկական բաւականութիւն։

Քանի որ քառաձայն խմբական երգեցողութեան գաղափարը մեզանում ընդունվել է և ընտելացել, պէտք է աշխատել զարգացնել նաև նրա գեղարուեստական կողմը, որը մեզ թոյլ կը տայ առանձնապէս դնել այդ գործը հասատ կազմակերպութեան ճանապարհի վրա։ Խմբական քառաձայն երգեցողութիւնը, հնարաւոր հնարամիջոցների ցանկութեան, ընդունվել է և հաստատվել նաև մեր եկեղեցիներում. այստեղ նոյնպէս երգեցողութիւնը զուրկ է գեղարուեստական կողմից։ Օրինակ՝ խումբը սկսում է երգել մի որ և է նոտայից և երբ վերջացրեց, մենք լսում ենք, որ խումբը կէս կամ մի ձայն իջել է իսկականից։ Եթէ այս կէս ու մի ձայն իջնելը առաջանար միանգամից, այն ժամանակ բաղդաւոր կը լինէին թէ խումբը և թէ լսողները. բայց տեսէք, որ տարաբաղդաբար աչքէս չէ վրիպում, այլ ձանձրանում են ուղիղ այնպէս, ինչպէս մի որ և է գործիքի թելերը (չլութակ, վիոլօնչել, պիանօ) քիչ քիչ և հէնց այդ քիչ քիչ իջնելու ժամանակ խմբի երգեցողութիւնը բաբելոնեան խառնակութեան է ենթարկվում, մինչեւ որ ուղիղ կէս ձայնի վրա իջնի, այստեղ միայն մեր լսողութիւնը հանգիստ է առնում։ Ապա ինչի՞ նման կը լինի այն խմբի երգեցողութիւնը, որի անդամներից ոմանց ձայները փոխանակ իջնելու, կէս ձայն բարձրանում են։ Կան ձայներ, որոնք փոխանակ իջնելու, բարձրանալու ընդունակութիւն ունեն, թէեւ այսպիսիները շատ չեն. ասենք, եթէ մի քանի անդամ լինի խմբի մէջ բարձրացող ձայներով, այն ժամանակ այդ խմբի երգեցողութիւնը կը դառնայ Թիֆլիսցու ասածով «չիլա-փլաւ»։

Անմշակ ձայների մէջ շատ հազուագիւտ են այն բաղդաւորները, որոնց ձայները փոփոխութիւնների չեն ենթարկվում, բայց այդպիսիներն էլ, երբ երգում են խմբի մէջ, ճընշվում են մեծամասնութեան ոյժի տակ և ընկնում նոյն ճանապարհի վրա։ Մի ամբողջ պատարագ երգելիս, եթէ ընդմիջումներին խմբապետը չը գնէ իւրաքանչիւր անդամ ձայները իսկական «տօնի» վրա, պատարագի վերջը խումբը իջած կը լինի մինչեւ 2 ձայն և աւելի։ Անմշակ ձայները անհամեմատ աւելի մեծ հակումն ունեն իջնելու և բարձրանալու, քան մշակված ձայները, իսկ որովհետև մեր եկեղեցական երգեցիկ խմբի անդամների և ոչ մէկի ձայնը մշակված չէ, ուստի անկասկած ամենքն էլ այն զբաղդաւորներից են, որոնց ձայները պատրաստ են ամեն մի երգի վերջին նեռված լինել դէպի կեղծութիւն։

Վերջապէս պէտք է մատնել, որ հայ հասարակութեան ձայակը օրէցօր զարգանում է, նա գեղեցկի պահանջ է զգում, պէտք է հեռացնել նաև տիրայուական այն «մրկրկոցները», որ իւրաքանչիւր վանկի վրա ստեղծելով 12 կանգուն անտեղի ձայնախաղեր, ուղղակի տանջում են և թուլացնում աղօթողի ջղերը, այսպիսով ժողովուրդը անզգայ կերպով քիչ-քիչ խորթանում է եկեղեցուց։ Հարկաւոր է լուրջ մատնել և վերաբերվել գործին լայն հայեացքներով. ժողովուրդը օրէցօր ատում է եկեղեցուց, պէտք է կատարել ժամանակի պահանջը, որպէս զի մեր որդիքը չասեն թէ՝ «տաւ է ուս, ման եռաէր»։

Գ. Բոյաջեանց

Գարիզ

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Վերջին տարիներս առանձին ուշք է դարձվում թէ հասարակական որոշ շրջաններում և թէ, մանաւանդ, կառավարչական բարձր շրջաններում, գործարանական աշխարհի շնչաւոր առարկաների վրա։ Բոլոր ոչ շնչաւոր առարկաների տեխնիկան բաւական, նոյն իսկ շատ դէպքերում չափից դուրս, կատարելագործված է վաղուց, քննված բազմակողմանի կերպով։ տեխնիքական, քիմիական և այլ գիտաքաղաքը ծառայում էր իբրև կենտրոն մշտական պատերազմների և այժմեան ժամանակի մէջ, երբ նա իր պարիսպների մէջ հիւրընկալում է խաղաղութեան համաշխարհային կոնգրէսը, որ ուեւտարեր է միջազգային միրաբանութեան և իրաւարարութեան նոր գաղափարների։

Մանակոյի իշխան Ալբերտ I, որ անձամբ եկել էր մասնակցելու կոնգրէսին, յանուն գիտութեան մտրանչում է այն նախապաշարումների դէմ, որոնցից ծագում են պատերազմները։ Նա յայտնում է, որ խաղաղութեան ընկերութիւնները կրում են իրանց մէջ բարքերի կերպարանափոխութեան սաղմը, որին դիմադրելու ոյժ չը պէտք է ունենայ պատերազմի պատուհասը։

Հեռաւոր ամբիոն են բարձրանում զանազան երկիրների և ազգերի ներկայացուցիչները, նշանաւոր խաղաղասէրները—դոկտոր Ադոլֆ Բրիխտէր, բարոնուհի Բերտա Սիւտնէր, Հոդսոն Գրատ, զօրապետ Տիւր, Մանէտտա, Գասսոն Մօխ, Ժակ Նովիկով, Էլի Դիւկոմմոն և ուրիշներ։

Կոնգրէսը միաձայն նախագահ է ընտրում էմիլ Արնօին, իսկ փոխ-նախագահներ—Ֆրեդրիկ Պասսի, Սպալիկովսկի, Լուրնէլ դը Կոնտան, տիկին Ֆլամարիօն։ Նախագահ Արնօ առաջարկում է ուղարկել մինիստր-նախագահ Կոմբին հեռանկար հեռագիրը. «Խաղաղութեան XII կոնգրէսը արտայայտում է պ. Կոմբին, մինիստր-նախագահին, իր երախտագիտութիւնը նրա համար, որ նա իր քաղաքական ազդակցութիւնը տուեց խաղաղասիրական իդեաներին, որ նա նախաձեռնութիւն ցոյց տուեց ի նպաստ խաղաղութեան և իրաւարարութեան և իր պաշտօնական ներկայացուցչին ուղարկեց կոնգրէսին մասնակցելու։

Տիկին Սեվէրինի առաջարկութեամբ կոնգրէսը ուղղում է Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվէլտին մի հեռագիր, որը ցնորակալութիւն է յայտնում, որ նա Հաագայի իրաւարարական տեսանին դիմելով յանձնարարեց այն երկու վիճող կողմերը, որոնք խնդրել էին նրան լինել միջնորդ դատաւոր։

Դրանից յետոյ միջազգային բիւրօի ներկայացուցիչ Էլի դը-Կոմմէոն կարդում է բիւրօի տեղեկագիրը՝ 1902—1903 թ. ընթացքում տեղի ունեցած այն դէպքերի մասին, որոնք կապ ունեն խաղաղասիրական շարժման հետ, ինչպէս Հայաստանի, Մակեդոնիայի, Վենեսուէլայի և այլ հարցերը։

—

Սեպտեմբերի 23-ին կոնգրէսը զբաղվեց Հայաստանի և Վենեսուէլային վերաբերեալ հարցերով։ Հասուն խորհրդածութիւններից յետոյ նա կայացրեց հետեւեալ վճիռները.

XII-րդ համաշխարհային կոնգրէսը վերանորոգելով. «IX, X և XI կոնգրէսների իրաւունքը, հաւանութեամբ արձանագրելով այն միջոցները, որ XI կոնգրէսի նախաձեռնութեամբ, Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձեռնարկեցին՝ բազմապատկելու հիւպատոսական գործակալների թիւը Հայաստանում, բայց ի նկատի ունենալով, որ եթէ այդ միջոցը կարող է խափանել կամ յետաձգել մինչեւ մէկ տարիներ, որ նա նոր խաղաղութեան և իրաւարարութեան կոնգրէսին մասնակցելու։

Ռուսական այդ ակզբունքների XII համաշխարհային կոնգրէսը հոչակաւոր քաղաքական, գիտնական և հասարակական գործիչների բերանով հանդիսաւորապէս բողոքեց Մակեդոնիայի, Հայաստանի, Վենեսուէլայի, Տրանսվաալի և այլ հանանման դէպքերի դէմ, և իբրև արտայայտիչ համաշխարհային խղճմտանքի, պարտականութիւն դրեց բոլոր այն պետութիւններին, որոնք, ինչպէս Գերմանիան, թոյլ են տալիս իրանց չեղվել արդարադատութեան, օրէնքի շաւղից և գործ են դնում ոյժ ու բռնութիւն։ Մի և նոյն ժամանակ կոնգրէսը յարուցեց մի շարք նոր հարցեր միջազգային իրաւունքին և յարաբերութիւններին վերաբերեալ, որոնք մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում։

«XII համաշխարհային կոնգրէսը—վկայում է Բերնի բիւրօն—նշանաւոր եղաւ մասնակցողների թուով և բարոյական հեղինակութեամբ, ինչպէս և քննված հարցերի կարեւորութեամբ։

Այդ պատճառով մենք էլ, իբրև անդամ նոյն կոնգրէսի և պատուիրակ «պարսկահայոց խաղաղութեան և իրաւարարական ընկերութեան», անտեղի չենք գտնում ծանօթացնել հայ հասարակութիւնը կոնգրէսի արդիւնաւոր գործունէութեան հետ, մանաւանդ որ կոնգրէսում չոչափված և քննված հարցերը ոչ միայն միջազգային, այլ և սոցիալական և իդէական կարեւոր նշանակութիւն ունեն։

Կոնգրէսի բացումը տեղի ունեցաւ սեպտեմբերի 22-ին և բացման ճառը արտասանեց Սպալիկովսկի, կարդալիր յանձնաժողովի նախագահը։ Նա ցոյց տուեց բարքերի զանազանութիւնը այն ժամանակների, երբ Ռուսաստանը ծառայում էր իբրև կենտրոն մշտական պատերազմների և այժմեան ժամանակի մէջ, երբ նա իր պարիսպների մէջ հիւրընկալում է խաղաղութեան համաշխարհային կոնգրէսը, որ ուեւտարեր է միջազգային միրաբանութեան և իրաւարարութեան նոր գաղափարների։

Մանակոյի իշխան Ալբերտ I, որ անձամբ եկել էր մասնակցելու կոնգրէսին, յանուն գիտութեան մտրանչում է այն նախապաշարումների դէմ, որոնցից ծագում են պատերազմները։ Նա յայտնում է, որ խաղաղութեան ընկերութիւնները կրում են իրանց մէջ բարքերի կերպարանափոխութեան սաղմը, որին դիմադրելու ոյժ չը պէտք է ունենայ պատերազմի պատուհասը։

Հեռաւոր ամբիոն են բարձրանում զանազան երկիրների և ազգերի ներկայացուցիչները, նշանաւոր խաղաղասէրները—դոկտոր Ադոլֆ Բրիխտէր, բարոնուհի Բերտա Սիւտնէր, Հոդսոն Գրատ, զօրապետ Տիւր, Մանէտտա, Գասսոն Մօխ, Ժակ Նովիկով, Էլի Դիւկոմմոն և ուրիշներ։

Կոնգրէսը միաձայն նախագահ է ընտրում էմիլ Արնօին, իսկ փոխ-նախագահներ—Ֆրեդրիկ Պասսի, Սպալիկովսկի, Լուրնէլ դը Կոնտան, տիկին Ֆլամարիօն։ Նախագահ Արնօ առաջարկում է ուղարկել մինիստր-նախագահ Կոմբին հեռանկար հեռագիրը. «Խաղաղութեան XII կոնգրէսը արտայայտում է պ. Կոմբին, մինիստր-նախագահին, իր երախտագիտութիւնը նրա համար, որ նա իր քաղաքական ազդակցութիւնը տուեց խաղաղասիրական իդեաներին, որ նա նախաձեռնութիւն ցոյց տուեց ի նպաստ խաղաղութեան և իրաւարարութեան և իր պաշտօնական ներկայացուցչին ուղարկեց կոնգրէսին մասնակցելու։

Տիկին Սեվէրինի առաջարկութեամբ կոնգրէսը ուղղում է Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահ Ռուզվէլտին մի հեռագիր, որը ցնորակալութիւն է յայտնում, որ նա Հաագայի իրաւարարական տեսանին դիմելով յանձնարարեց այն երկու վիճող կողմերը, որոնք խնդրել էին նրան լինել միջնորդ դատաւոր։

Դրանից յետոյ միջազգային բիւրօի ներկայացուցիչ Էլի դը-Կոմմէոն կարդում է բիւրօի տեղեկագիրը՝ 1902—1903 թ. ընթացքում տեղի ունեցած այն դէպքերի մասին, որոնք կապ ունեն խաղաղասիրական շարժման հետ, ինչպէս Հայաստանի, Մակեդոնիայի, Վենեսուէլայի և այլ հարցերը։

—

Սեպտեմբերի 23-ին կոնգրէսը զբաղվեց Հայաստանի և Վենեսուէլային վերաբերեալ հարցերով։ Հասուն խորհրդածութիւններից յետոյ նա կայացրեց հետեւեալ վճիռները.

XII-րդ համաշխարհային կոնգրէսը վերանորոգելով. «IX, X և XI կոնգրէսների իրաւունքը, հաւանութեամբ արձանագրելով այն միջոցները, որ XI կոնգրէսի նախաձեռնութեամբ, Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձեռնարկեցին՝ բազմապատկելու հիւպատոսական գործակալների թիւը Հայաստանում, բայց ի նկատի ունենալով, որ եթէ այդ միջոցը կարող է խափանել կամ յետաձգել մինչեւ մէկ տարիներ

նական վերլուծումների են ենթարկված ամեն կերպ և ամեն տեսակ։ Մոռացված էր միայն մարդը։ Նույն իսկ մեր Բալախանիում իբրաքանչիւր կառավարիչ աչքերը խփած կարող է ասել, թէ ինչ մասեր և ինչ պայմաններ են հարկաւոր չքեղ կտոր, արադընթաց գեղեցիկ նժոյգներ ունենալու համար, իսկ որ հարցնէք, թէ ինչ է հարկաւոր մի մարդու, ինչ տեսակ յատկութիւններ և պաշար, որը լաւ կօնաւորչիկ կամ գործակատար լինի,—նա կը պատասխանէ քեզ պատասխանելուց։

Մարդը մոռացված էր և նա էլ է այժմ ուշադրութեան արժանանում։ Կաշխատեմ ծանօթացնել մեր ընթերցողներին սիստեմատիքաբար այն նոր կարգադրութիւնների և ձեռնարկութիւնների հետ, որոնք և սկսվում են բանաւորական դասի համար, նրա կրթութեան մակերեսոյթը բարձրացնելու, նրա աշխատանքի պայմանները բարւոքելու, թեթևացնելու։

Գեսերբուրգի Կայսերական տեխնիքական ընկերութիւնը, ինչպէս մի քանի անգամ յայտարարվել է լրագրներում, պատրաստութիւն է տեսնում այս տարվայ վերջը կամ առաջիկայ տարվայ սկզբին Ռուսաստանում տեխնիքական և պրոֆեսիոնալ գիտութիւններով հետաքրքրվող և նրանցով զբաղվող գործիչների համագումար ժողով նշանակել՝ քննելու բաղմակողմանի կերպով այն բոլորը, ինչ որ մինչև այժմ արված է պրոֆէսիոնալ և տեխնիքական գիտութիւնները տարածելու համար գործարանական կենտրոններում։ Մեր երկիրը, ինչպէս արդիւնաբերական նոր երկիր, ինչ խօսք, այդ ուղղութեամբ շատ քիչ բան է արել. արդիւնաբերութիւնը մեզանում շատ տեղերում քնած է, շատ տեղերում բոլորովին թաքնված, շատ տեղերում էլ նոր միայն արթնացած և սաղմնային դրութեան մէջ։ Մենք դեռ լիակատար կերպով չը դիտենք, թէ ինչ ունենք և ունեցածներիցս որքան ունենք, ինչ տեսակներից են ունեցածներս և եղածը ինչի համար ուրի օգտաւէտ կերպով կարելի է և պէտք է գործադրել։ Մեր այդ կատարեալ անգիտութիւնն է, որից անտեսապէս քայքայվում է մեր ժողովուրդը, չը կարողանալով դիմանալ իր քնաթաթախ ոյժերով, ողորմելի պաշարով էվոլիւցիայի զօրեղ հրումներին և անկարող լինելով, խեղդվողի նման, օր և է ոնչիր նախ ունենալու՝ ժուռմելու համար...

Տգիտութեան համար չը կայ փրկութիւն։ Մենք յաճախ, նստած ոսկու, պղնձի կամ մի ուրիշ մետաղի հանքի վրա, քաղցից ողորմութիւն ենք ժողովում և սկանտես լինում, ինչպէս ուրիշը ժողովում է մեր հարստութիւնը։ Մեր գինուց կենտակ և ուրիշ արժէքաւոր խմիչքներ են պատրաստում մեր ձեռքով և հրէշաւոր գներով ծախում են մեզ։ Գօմիդօրի, բաղրիջանի, կանաչ պղպեղի—որոնց տասը մի կօպէկ արժէ մեզանում,—մի հատին, Բելգարիայից ստացված թիթեղեայ մի արկղում—մենք 50 կօպէկ ենք վճարում...

Ահա թէ ինչ է պակասում մեզ. այդ երրորդ համագումարի X սեկցիան զբաղվելու է բացառապէս տեխնիքական, պրոֆէսիոնալ գիտութիւնների վերաբերեալ խնդիրներով, զանազան արհեստանոցների, արդիւնաբերական նոր ձեռնարկութիւնների, նոր ճիւղերի տեսակների քննելով, տարիների ընթացքում նրանց դրական և բացասական արդիւնքների պատճառները ուսումնասիրելով և այլն։ Ինչ խօսք, որ այդ համագումար ժողովը շատ խնդիրներ է պարզելու, նա երևան է հանելու մեր խաւար կողմերի մեծ վէրքերը, նա հրապարակի վրա է դնելու մեր մեծածաւալ, ապաղանգաւոր ազիտութիւնը։ Նպատակը, անկասկած, բարի է։ Վէրքը չէ ցաւցնվում, մինչև որ նրան հիմնաւորապէս չեն ուսումնասիրում։ Այս դէպքում էլ պէտք է բաղմակողմանի կերպով ուսումնասիրէ ժողովը մեր կարիքները, բայց դրա համար հարկաւոր է մեր ազնակցութիւնը. հարկաւոր է, որ հասարակութիւնը իր ձեռնհաս անդամների միջոցով ժողովի ակտիվին հասցնէ մեր պակասութիւնների մասին, որ նրա առջև դնէ մեր ունեցածները իր խնդիրներով (դրա համար ցուցահանդէսի բաժին էլ կայ) և լսեցնել ապ մեր չունեցածների մասին։ Դրա համար էլ զեկուցանելու իրաւունք է տրվում։

Ցեռ չէ մնացել ընդհանուր տեխնիքական և մասնաւոր պրոֆէսիոնալ ազիտութիւնից մեր Կովկասի արդիւնաբերական մայրաքաղաք Բագուն. այստեղ էլ կատարեալ խաւար։

Բազմաթիւ դժբաղդ դէպքեր մարդկանց հետ, բազմաթիւ ձախորդ դէպքեր այս կամ այն արդիւնաբերական ձեռնարկութեան հետ—այդ բոլորը ազիտութեան հետևանք է, դրանց պատճառը պէտք է փնտռել պրոֆէսիոնալ հոնորատաչելի գիտութիւնների բացակայութեան մէջ։ Այդ համագումար ժողովի համար Բագուն էլ իր դերն ունի կատարելու։

Ռ. Ցովհաննէսեանց

Բագու.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Հոկտեմբերի 9-ին

Մեր նահանգական վարչութիւնը ձեռնարկել է մի գործ, որը էական նշանակութիւն ունի Գանձակի նահանգի գիւղական ժողովրդի համար. այդ գործն է տեսուչների համաձայնութեամբ ընդլայնացումը ու նրանց վարչական կազմակերպութեան կանոնաւորումը։

Գանձակի նահանգի գիւղական համայնքների թիւը այժմ հասնում է 489-ի։ Ռուսաստանի ներքին նահանգներից ամենաբազմամարդն անգամ, ինչպէս են Մոսկվայի ու Գիովի նահանգները, այդ թիւի կէսի չափ անգամ գիւղական համայնքներ չունեն։ Մեր նահանգի համայնքների այդ բազմաշատութիւնը բացատրվում է երկրի մակերևոյթի կազմութեամբ, որը լեռնոտ է ընդհանրապէս, ու հաղորդակցութեան ճանապարհների անբաւարարութեամբ։ Այդ պատճառները ստիպել են 60-ական թուականներում, Գանձակի նահանգի օրգանական կազմը մտցնելիս, ստեղծել այդքան շատ գիւղական համայնքներ, որոնցից շատերը 200—250 անից աւել չեն ու հազիւ ունեն 1000—1200 հոգի բնակիչ։ Ամենափոքր համայնքները գտնվում են լեռնավայրերում, իսկ համեմատաբար մեծերը (400—500 տուն ունեցող) գտնվում են ստափարակ տեղերում, նահանգի հիւսիս-արևելեան մասում. այդպիսի մեծ համայնքների թիւը շատ քիչ է։ 489 տանուտէր, մօտաւորապէս 850 տանուտէրի օգնական, 1820 գիւղական դատաւոր, 620 գրագիր, 600 հարկահան ու 550 գզիր։ Դրանցից ոռճիկ ստանում են տանուտէրները, հարկահաններն ու գզիրները, քանի որ դրանք, միւսների հետ համեմատած, աւելի զբաղված լինելով իրանց պաշտօնապատասխանութեամբ, շատ քիչ ժամանակ ունեն իրանց մասնաւոր գործերով պարապելու։ Տանուտէրի օգնականներն ու դատաւորները, որոնք իրանց պաշտօնով զբաղվում են սովորաբար կիրակի ու ասն օրերը, ծառայում են առանց ոռճիկի. շատ քիչ գիւղեր են միայն տանուտէրի օգնականին ոռճիկ տալիս։ Տանուտէրի ոռճիկը սովորաբար լինում է 120—150 ր. տարեկան, գրագրինը, հարկահանին ու գզրինը 80—100 ր. իւրաքանչիւրինը։ Անբաւարար համարելով իրանց ոռճիկները, այդ անձինք աշխատում են այլ կերպ իրանց «բանը տեսնել» ու կարգին «բան են տեսնում» ամեն քայլափոխում թոյլ տալով իրանց կեղեքումներ ու կոպիտ ապօրինութիւններ։

Ամենամեծ դերը այդպիսի մութ գործերում կատարում է, ի հարկէ, տանուտէրը, որը իրան գիւղի մեծ տէր յայտարարելով, իր «խելքի կտրած» ամեն բան անում է իր գրպանը լցնելու համար. 120 ր. պաշտօնապէս ոռճիկ ստացող տանուտէրը յաճախակի իր տարեկան ոռճիկի քանակը հասցնում է 1000—1500 ռուբլու։ Միւս պաշտօնեաներն իրանց դիրքի ու ազդեցութեան համեմատ են իրանց «բանը տեսնում». ոռճիկ չը ստացող տանուտէրի օգնականներն ու դատաւորներն էլ են միշտ աշխատում մի բան ճանկում են, և այդպիսով իր բոլոր պաշտօնեաներին պաշտօնապէս ընդամենը 400—500 ր. տարեկան ոռճիկ վճարող փոքրիկ գիւղական համայնքը իսկապէս վճարում է նրանց 2000-ից մինչև 3000 ր. տարեկան։ Փոքրիկ ռեսպուբլիկան համայնքը, պահելով 80—100 ր. ոռճիկ ստացող մի գրագիր, կիսագրագէտ գիւղացիներից, զուրկ է լինում միշտ կարգին գիւանից ու գործավարութիւնից. գիւղի հաշիւները, «բաղմամեայ դատաբարները», ապատափեշնում են իրանց մութ, խրթին, անորոշ, գրողին ու նրան թելադրող տանուտէրին միայն հասկանալի դարձուածքներով. գիւղական դատարանի արձանագրութիւնները կազմվում են շատ անկարգ ու անկանոն կերպով, աշխարհաբարի ու գրաբարի մի այնպիսի բարդ քիմիական խառնուրդով, որ երբեմն ամբողջ օրերով ոտիպված ես լինում նստել գիւղական «Դատէթ Անյաղթի», իրան հանձնարարված գրագիր հանգնեցնում անհրաժեշտ ըէֆերմները, ի նկատի ունենալով, որ մեծ պետութիւնների պարտաւորութիւնն է կանգնեցնել արիւնհեղութիւնը, կօնգրէսը եռանդուն կոչ է անում քաղաքակիրթ ազգերին և մասնաւորապէս Բերլինի գաղտագիրը ստորագրող մեծ պետութիւններին, որ նրանք անյապաղ վերջ դնեն կոտորածին մի ընդհանուր գործողութեամբ։ Կօնգրէսի անդամները պարտաւորվում են բացի դրանից ամեն ջանք գործ դնել, որպէս զի մեծ պետութիւններին ուղղած այդ կոչը լաւի կատարութիւններից։ Կօնգրէսը յիշեցնում է, որ Սան-Ստեֆանօյի դաշնագիրը իրրև հիմք ընդունում էր ժողովուրդների իրաւունքը՝ անօրինել ինքն իրանց։

Նոյն օրը, կէսօրից յետոյ կայացած նիստի ժամանակ, մինիստր-նախագահ Կոմբից ստացվեց այս հեռագիրը. «Նախագահ Էմիլ Արնօն հաղորդեց ինձ XII համաշխարհային կօնգրէսի քուէարկած շնորհաւորութեան և անձնուիրութեան մի ուղերձ կառավարութեան հասցէին։ Ինդրում եմ ընդունել ջերմ շնորհակալութիւնները կառավարութեան, որ շատ զգածվեց այդ ցոյցից»։

Ապա տիկին Սիւանէրի առաջարկով քուէարկվեց հետևեալ որոշումը. «Կօնգրէսը ամբողջովին յարում է այն իդէային, որ Վիէննայի XI միջազգայնամենասական կօնֆերենցիան ասել է, որպէս զի մի նոր միջազգային կօնֆերենցիա գումարվի վերսկսելու համար զինաթափութեան խնդիրը, որ պաշտօնապէս առաջարկել է Հաագայի կօնֆերենցիան»։

Հետևեալ որոշումները նոյնպէս ընդունվում են միաձայն։

1) Կօնգրէսը համոզված է, որ հասել է ժամանակը խաղաղութեան ընկերութիւնների պրոպագանդայի մէջ առաջին տեղը տալ միջազգային ապառազինութեան դատը տալու փորձին։ Վերջին տարվայ ընթացքում հասարակական միջոցների վատնումը, իբրև հետևանք մեծ պետութիւնների անպտղաբեր մրցակցութեան, անլուր ծաւալ է ստացել և պարտաւանքի է ենթարկվել Ֆրանսիայի, Անգլիայի և այլ երկիրների առաջադէմ պետական անձանց կողմից։

2) Կօնգրէսը յիշեցնում է ընկերութիւններին և ամբողջ աշխարհի խաղաղասէրներին Հաագայի կօնֆէրէնցիայի քուէարկած հետևեալ որոշումները։

«Կօնֆէրէնցիան գտնում է, որ ամբողջ աշխարհի վրա ծանրացող պատերազմական ծախքերի ահռելի աճումը մեծագոյն ցոնկալի է մարդկութեան նիւթական և բարոյական բարգաւաճման համար։ Կօնֆէրէնցիան իրաւ է յայտնում, որ կառավարութիւնները, հաշուի առնելով կօնֆէրէնցիային տրված առաջարկութիւնները, սկսեն ուսումնասիրել մի համաձայնութեան հնարաւորութիւնը ծովային և ցամաքային սպառազինական ոյժերի և պատերազմական բիւջէների սահմանափակման մասին։

9. Կլարկի առաջարկը, որ պահանջում էր Ֆրանսիական կառավարութեան նախաձեռնութիւնը միւս կառավարութիւնների առաջ սպառազինութիւնների կրճատման համար, ընդունվեց միաձայն։

(Կը շարունակվի)

թեամբ առաջ կը տանէ իր հասարակական գործերը։

Մեր գիւղական գործիչները, ընդհակառակը, հակված են դէպի համայնքների փաքրացումը. եթէ բանը նրանց մօտ 30—40 տուն ունեցող խղճուկ գիւղից մի առանձին համայնք կը կազմեն, քանի որ այդ ձեռնտու է իրանց, գործիչներին. գրաւելով հասարակական պաշտօնները, նրանք կիշխեն գիւղում, կը ծծեն, կը քամեն նրան... Ամեն գիւղ, յանձին իր գործիչներիս, առանց կշռելու իր ոյժերը ձգտում է ինքնավարութեան։ Մեր գաւառի գիւղերից ընորոշ է Զովգառ գիւղը իր ինքնավարական տենչանքներով։ Նա ունի ընդամենը 85 տուն ու Բանանցի հետ միասին կազմում է մի գիւղական համայնք, բայց իր դրութեան հետ հաշտվել չէ կարողանում. միշտ ձգտում է առանձին տանուտէր ու տեփական դատարան ունենալու։ Երբ նրանց ասում են, որ առանձին համայնք կազմելով, մեծ ծախսերի տակ կընկնեն ու կը ծանրաբեռնեն գիւղը հարկերով ու պարաքերով, նրանք պատասխանում են՝ «Մեր գարդը ձեզ չեն տուել. մենք ենք խաբար մեր չէնը. պէտք ա մեր ձեռին էլ իրաւունք ըլի. ձեր ինչ գործն ա, թա մենք ոնց կը կառավարվենք։ Ասում էք, որ մենք խելքը գլխին մարդ չունենք, բան չի կայ. կը գնանք ծմակից մի արջ կը բռնենք, կը բերենք քեօխվի ժնջիլը (շղթան) ճիտը կը դնենք ու կառնենք՝ «ա արջ, մեր ուզրաշին օրէսաբը դու ես. քո հօրն ողորմի, դու մեզ կառավարի. ուզում ես, մեզանից օրը մի ասաւար կեր, միայն թա գու ըլես մեր մեծը, այլ ոչ թա օտար գեղացին։ Մեր ծմակէն, մեր միջէն բռնած էն արջն ըլի մեր քեօխվէն, մեզ համար աւելի լաւ ա, քան թա օտար չէնացի իմաստունը, թաք մեր գեղի էրաւունքը մեր ձեռին ըլի»...

Աչքի առաջ ունենալով այդ բոլորը, մեր նահանգական վարչութիւնը որոշել է մեծացնել նահանգի գիւղական համայնքները, հինգից ոչնչած մինչև տասը գիւղը ենթարկելով մի գիւղական վարչութեան, մի տանուտէրի, կազմելով նրանցից մի գիւղական շրջան (волость) 1000—1200 տուն ազգաբնակութեամբ։ Համայնական վարչութիւնը (волостное правленіе) ու դատարանը կը գտնվեն շրջանի կենտրոնական ու ամենամեծ գիւղում, իսկ միւս գիւղերում կը լինեն միմիայն տանուտէրի օգնականներ իրանց գպիրներով։ Կենտրոնական գիւղում պէտք է մէջտեղ իրանց պաշտօնավարութեան մէջ գտնվեն տանուտէրը, դատաւորները, համայնական գրագիրն ու հարկահանը։ Ապահովված լինելով առճիկներով, նրանք չը պէտք է իրանց մասնաւոր գործերով բացակայեն գիւղից։ Համայնական գործերի կանոնաւոր ընթացքը չը պէտք է ընդհատվի. դիւանատունը ու դատարանը պէտք է ամեն օր բաց լինեն ու միանգամայն մատչելի գիւղացիներին։ Նահանգական վարչութիւնը պատուիրել է գաւառապետներին, որ նրանցից իւրաքանչիւրը բաժանէ իր գաւառը գիւղական շրջանների, որոշէ, որ գիւղերը որ շրջանի մէջ պէտք է մտնեն, որ գիւղում պէտք է լինի համայնական վարչութիւնը ու դատարանը, կազմի գաւառի քարտէզը, նրա մէջ որոշէ գիւղական նոր շրջանների սահմանները ու այդ բոլորը ներկայացնէ նահանգական վարչութեան։ Ստանալով գաւառապետներից նոր համայնքների ցուցակներն ու քարտէզները, նահանգական վարչութիւնը կը ներկայացնէ այն կովկասեան կառավարչապետի հաստատութեան, ու նոր կարգ այդպիսով գոյութիւն կը ստանայ։ Այդ բոլորը պէտք է կատարվի մինչև 1904 թ. յունվարը։

Ստ. Տէր-Աւետիքեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը, կիրակի, հոկտեմբերի 26-ին, ցերեկվայ ժամը 12-ին, ներկայացրեց Ալֆոնս Դոդէի «Արլէզիէն» դրաման, որ առաջին անգամն էր դրվում հայ բեմի վրա։ Այդ առիթով պէտք է ասենք, որ ֆրանսիական հանճարեղ գրողի այդ գեղեցիկ պիէսան ցերեկով ներկայացնելը շատ ձախորդ գաղափար էր. չը նայելով պիեսայի նորութեան, չը նայելով էժանացրած գներին, թատրոնը գրեթէ դատարկ էր։ Երևի այդ դատարկութիւնն էլ ազդել էր և դերասանների վրա, որոնցից ոմանք իրանց դերերը չը գիտէին, իսկ ոմանք էլ կարծէք ակամայ էին խաղում։ Նոյն իսկ տիկին Սիրանոյշ ցույց չը տուեց այն զօրեղ կորովը, հոգեբանական յուզմունքը, որ մենք սովոր ենք տեսնել նրա մէջ ամեն մի դրամա խաղալիս։ Մենք կարծում ենք, որ էժանացրած գներով ներկայացումը կարելի է երբեմն երբեմն տալ միայն ոչ ցերեկը։

—

Զեմսվոյի գործիչները, որոնք հրաւիրված էին, պետական քարտուղար Կոխովցեվի նախագահութեամբ, քննելու Ռուսաստանի կենտրոնական նահանգների տղաքատության վերաբերեալ հարցը, կարծիք յայտնեցին, որ այդ հարցին բաւականացման պատասխան տալու համար անհրաժեշտ են էական բարեփոխումներ գիւղացու ոչ միայն նիւթական, այլ նաև հոգևոր, օրինական, հասարակական և կուլտուրական կեանքի մէջ։ Զեմսվոյի գործիչները ուշադրութիւն դարձրին նոյնպէս այդ երևոյթի պատմական պատճառների վրա, որոնց մէջ առաջին տեղը բռնում է ճորտատիրութիւնը և որ ամենածանր ազդեցութիւն է թողել Ռուսաստանի կենտրոնական նահանգների գիւղական ազգաբնակութեան վրա։ Չը հերքելով գիւղացիների կեանքի արտաքին պայմանները բարեփոխելու անհրաժեշտությունը՝ զեմսվոյի գործիչները ամենաէական միջոց ժողովրդական բարեկեցութեանը նպաստելու համար համարում են իրան՝ գիւղացու անձնաւորութեան օրինական վիճակի բարձրացումը։ Միայն լուսաւորութիւնը, անձնաւորութեան բարձրացումը, ինքնագործունէութիւնը, զօրեղացնելով և բազմացնելով գոյութեան կռուի միջոցները, հարստացնելով կենսական եռանդը, յոյս են տալիս գիւղացու կենցաղի բարւոքման, իսկ միւս բոլոր միջոցները, որոնք թեթևացնում են կեանքի արտաքին պայմանները, ինքն ըստ ինքեան անխուսափելի են դառնում, սակայն առանց ընդհանուր միջոցների չեն կարող էական համարվել և հազիւ թէ հասցնեն ցանկալի նպատակին։ Այս պատճառով զեմսվոյի գործիչները գիւղական ազգաբնակութեան կենցաղը բարւոքելու միջոցներից առաջին տեղը տալիս են այնպիսի ռէֆորմի, որ հիմնաւորապէս փոխէր գիւղի օրինական ամբողջ կազմակերպութիւնը։

—

Թիֆլիսի նահանգապետը առաջարկեց քաղաքային ուղրավային մի զեկուցում ներկայացնել դումային Կաւբ գեսի ավլակողմանի ճիւղը հողով լցնելու վերաբերմամբ, աչքի առաջ ունենալով, որ այդ ճիւղը այժմ ներկայացնում է ամբողջ քաղաքի և մանաւանդ ճիւղի շրջականների համար մի վերին աստիճանի վնասակար աղտաւեղի։ Թէև Կաւբի այս ճիւղը հողով լցնելու համար քաղաքը առաջված կը լինի բաւականաչափ մեծ գումար ծախսել, բայց այդ գումարը անկորուստ կը վերադառնայ հողային այն տարածութեամբ, որ կը կազմվի ճիւղը լցնելուց յետոյ և որ քաղաքային ինքնավարութիւնը կը շահագործէ իբրև սեփականութիւն։

—

Շաբաթ, հոկտեմբերի 25-ին, Հայլաբարի ժողովրդական թատրոնում հայ սիրողների խումբը խաղաց Սունդուկեանի «Լի մէկ զոհ» կոմէդիան։ Խաղը լաւ անցաւ։ Դերակատարներն ընդհանրապէս սովորական աջողութեամբ կատարեցին իրանց դերերը։ Տիկին Փառանձէմը իր դերումն էր և կը փայլեր, եթէ միայն դերը մի փոքր աւելի լաւ լինէր սովորած։ Դերակատարների մէջ աչքի ընկաւ նոյնպէս տիկին Արվանեան, որ շատ լաւ խաղաց իր դերը. նա բնական կերպով արտայայտում էր սէր, տանջանք, թախիծ և երբեմնակի ցօլացող ուրախութիւն։ Շատ միխիթարական է, որ ուրիշ սիրողուհիներն էլ՝ նկատելով ժողովրդական բեմի կանացի ոյժերի պակասութիւնը, յանձն են առնում մասնակցել և աւելի դարկ տալ ժողովրդական ներկայացումներին։ Օրիորդ Հայկուհին այս անգամ թոյլ էր Բարբարէի դերում. նա կարող էր աւելի լաւ խաղալ, կարծես թէ ակամայից էր դուրս եկել բեմ։ Լաւ էր և պ. Սարեան հարուստ վաճառականի՝ Սարգսի դերում։ Եղանակի վատութեան պատճառով հասարակութիւնը քիչ էր։

—

Վաց «Իվէրիա» լրագիրը հեռագիր է ստացել Մանջուրիայի Խարբին քաղաքից, որ այնտեղ ապրող վրացիները հոկտեմբերի 28-ին տուել են մի ներկայացում վրացերէն լեզուով։ Պէտք է ենթադրել ուրեմն, որ այդ նոր հաստատված քաղաքում բաւականաչափ վրացիներ են ժողովվել, եթէ կարիք է զգացվում ներկայացումներ տալու։

—

Սև ծովի կովկասեան ափերի գինեգործների և այգեպտղների ընկերութեան վարչութիւնը առաջարկութիւն է ստացել՝ առևտրական յարաբերութիւններ սկսել Ֆրանսիայի հետ՝ վաճառահանելով այդ երկիրը 12-ից մինչև 14 աստիճան ամրութիւն ունեցող սպիտակ և կարմիր գինիներ։

—

Դիրակի, հոկտեմբերի 26-ին, անդի ունեցաւ Թիֆլիսի դումայի անդամներից կազմված մի մասնաւոր խորհրդակցութիւն, որի ժամանակ առաջարկվեցին թեկնածուներ ուղարկելի նոր անդամի ընտրութեան համար։ Զայների մեծամասնութիւնն առաջարկվածներից ստացան Ն. Տիգրանեան և բժիշկ Ա. Քասխեան։

—

Դիրակի, հոկտեմբերի 26-ին, Հալլաբարում, Արաքսեանի նոր թատրոնում խաղացին «Թագի համար» ազգերգութիւնը, հեղինակութիւն Ֆրանսուա Կոպպէի։ Խաղի ընդհանուր ապատարութիւնը լաւ էր։ Առաջատան խաղացին «Երկրորդ երիտասարդութիւն» էժան գներով։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, հոկտեմբերի 23-ին, Թաղիեվի թատրոնում գերասան Աւալեանը տեղիս սիրողների մասնակցութեամբ ներկայացրեց «Գէզո» կոմէդիան։ Ներկայացումը ընդհանրապէս աջող անցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Նաւերի ընդհարում. «Temps» լրագրի ասելով մօտ օրերս Հեռաւոր Արևելքում՝ Խուկօգա նաւահանգստից 24 կիլոմետր հեռաւորութեան վրա, բաց ծովում անսպասելի կերպով ընդհարվել են հակառակ պետութիւնների երկու նաւեր՝ ռուսական «Գրոզրեա» նաւը և եապոնական «Տոկա-Մարու» նաւը։ Ընդհարումն ունեցել է կորստաբեր հետևանք. եապոնական նաւը ջրասոյզ է եղել՝ իր հետ տանելով մօտ 100 մարդ։

Արդեօք պատահականութեան արդիւնք է դա, թէ ծրագրված նպատակի—այդ մասին լրագիրը լռութիւն է պահպանում։

—

Չինաստանը անհանգիստ է. Սառնարիւն ժողովուրդ են չինացիները, բայց ոչ բոլորովին զուրկ հայրենասիրութիւնից և չը-Չահայեաց գիտակցութիւնից։ Ներկայ լրված պայմաններում նրանք շատ լաւ զգում են, թէ Եապոնիան և Ռուսաստանը միայն իրանց շահերն են որոնում Մանջուրիայում, թէ ինչ ելք էլ որ ունենայ նրանց մրցումը, այնուամենայնիւ Չինաստանն է տուժելու մէջտեղը, թէ օտարների թափած արցունքները միայն գայլի արցունքներ են և թէ դրանցից իւրաքանչիւրը ուզում է շահվել ի հաշիւ չինական ժողովրդի, չինական պետութեան։

Այդ բոլորից յետոյ հասկանալի է, թէ ինչու չինացիները այնքան կասկածանքով են վերաբերվում թէ դէպի եապոնացիները և թէ մանաւանդ դէպի ռուսները։

Եապոնական «Տոկիո Առախտ» լրագիրը հաղորդում է, որ Չինաստանը ամեն կերպ աշխատում է ռուս-եապոնական պատերազմի առաջն առնել, հատուցած լինելով, որ նա այդ պատերազմից միայն վնասվել կարող է։ Այդ հաւատից դրդված նա աշխատում է երկու պետութիւններին միատեսակ արտօնութիւններ և դիւրութիւններ տալ։

Բայց արդեօք այդքանը բաւական է մրցակից պետութիւններին գոհացնելու համար...

—

Գերմանիան օգտվում է. Վերջին տարիների ընթացքում Գերմանիան զարմանալի ճարպիկութեամբ առաջ է մղում իր շահագիտական քաղաքականութիւնը։ Դրա պերճախօս ապացոյցն է նրա բռնած դիրքը Թիւրքիայի վերաբերմամբ։ Այդ բռնակալ պետութիւնը կոտորում է քրիստոնեայ հպատակներին, արիւնով է ներկում իր ընդարձակ նահանգները. պետութիւնները բանակցութիւններ են մղում չարիքի մասին, պահանջներ են անում, իսկ ճարպիկ «Միխելը» սուսիկ-փուսիկ ձեռք է մեկնում արիւնոտ սուլթանին, գուրգուրում է նրան, փոխարէնը զանազան կօնցեսիաներ ու անտեսական-քաղաքական արտօնութիւններ առանալով։ Այժմ նա այդ մի և նոյն դերը խաղում է և Հեռաւոր Արևելքում։ Ընդունված է կարծել, թէ այդտեղ ամենից աւելի շահագրգռված պետութիւններն են Ռուսաստանը, Եապոնիան, Անգլիան և Ամերիկան։ Եւ իսկապէս դրանցից իւրաքանչիւրը բացայայտ կերպով արտայայտում է իր պահանջներն ու ձգտումները։ Իսկ Գերմանիան լռում էր, կարծես նա շահ չունէր Հեռաւոր Արևելքի հրատապ հարցերում։ Բայց մինչ, այժմ քանից դուրս է գալիս, որ այդ ապմուկի ու իրարանցումի ընթացքում դարձեալ Գերմանիան է ամենից շատ օգուտ քաղողը։ Եապոնական «Տոկիո Առախտ» լրագրի ասելով, Գերմանիան մօտ օրերս թոյլտուութիւն է ստացել Ցզի-Նան-Ֆու քաղաքում հիմնարկութիւն հաստատելու։ Բացի դրանից գերմանացիների ձեռքն է անցել Ցինդաոից դէպի Ցզին-Նան-Ֆու չինվող երկաթուղու—(160 մղոն) հողային աշխատանքները։ Այդ նահանգի բոլոր գլխաւոր կենտրոններում գերմանական պօստային բաժանմունքներ են բացված։ Գերմանացի երկրաչափներն ու ինժեներները չափում, ուսումնասիրում են երկրի հարստութիւնները։ Ցզին-Նան-Ֆուում բացված է գերմանական-քաղաքագիտական դպրոց։ Մի խօսքով գերմանական ազդեցութիւնը Չինաստանում տարածվում է հսկայական չափերով և նոյն իսկ անգլիացիները զարմանում են, տեսնելով, թէ Գերմանիան ինչպէս է օգտվում հանգամանքներից։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Djibouti» լրագիրը հաղորդում է, որ Թիւրքահայ Ազնաւուրեանի ձեռքով Ադդիսէրտագում հաստատված միջազգային կուրի բացման հանդէսին ներկայ էին Բաս-Մահմէնն և Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի ներկայացուցիչները։

—Թովմաս Բարկլայ, մինը այն անձերից, որոնք աշխատեցին իրաւարարութեան գաղափար հաստատել Ֆրանսիայի և Անգլիայի մէջ, այժմ գնալով Ամերիկա, աշխատում է Նիւ-Եօրկում, որ նոյնպիսի մի գաղափար հաստատվի Միացեալ-Նահանգների և Բրիտանիայի մէջ։

—Կ. Գօլոից հեռագրում են, որ Ֆրանսիայի, Անգլիայի և Բաւարիայի դեսպանները ճնշումներ են գործ դնում Բ. Դրան և Ցլդրզ-Քիոսկի վրա ուսարօ-ռուսական պահանջների մասին, բայց սուլթանը չարունակում է տատանվել։ Ֆրանսիոյ մուսուլման հոգևորականութիւնը ամեն ջանք գործ է դնում ազդել և թոյլ չը տալ, որ դիպլոմատիայի ջանքերը պսակվեն։ Փաքր ի շատէ ազդեցիկ թիւրք շրջանները աշխատում են համոզել սուլթանին, թէ նրա անձնական դիրքը, իբրև խալիֆի, վնաս չի կրի, եթէ նա հնազանդվի ռուս-աւստրիական պահանջներին միայն պատերազմից յետոյ, երբ այդ պատերազմը անպատճառ հետևանք ունենայ Թիւրքիայի համար։ Բայց թոյլ տալ օտար պետութիւններին առանց պատերազմի կատարել Թիւրքայ երկիրները կարող է ամենավտանգաւոր հետևանքներ արտադրել սուլթանի համար։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ԴՈՒՍԱՌ ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

25 հոկտեմբերի

ԿԻԵՎ. Այսօր, Զայկովսկու մահվան օրը, Վլադիմիրեան տաճարում մատուցվեց հոգեհանգստեան պատարագ։ Զայկովսկու պատարագը երգում էին՝ երգեցիկ խումբը և օպերայի թատրոնի մօտ հարիւր արբանեակներ և արբանեակուհիներ։

ՎԱՐՇԱՎԱ. Զայկովսկու մահվան տասնամեայ տարեդարձին մայր եկեղեցում հոգեհանգստեան պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց։ Երեկոյեան քաղաքային տան դահլիճում կայացաւ կենցէրտ հանգուցեալ կոմպոզիտորի հեղինակութիւններից։

ՄՈՍԿՎԱ. Զայկովսկու մահվան տարեդարձի առիթով Համբարձման տաճարում մատուցվեց պատարագ և հոգեհանգիստ կատարվեց։ Սինոդի երգեցիկ խումբը երգում էր բացառապէս հանգուցեալի հոգևոր գրուածքներից։

ՏԱՆԺԵՐ. Սուլթանը արգելեց եւրոպացիներին մտնել Տանժեր։ Բացառութիւն արված է միայն ֆրանսիական հիւպատոսի համար։

26 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնա Օգոստափառ երեխաներով ճանապարհ ընկան Վոլֆգարտէնից դէպի Սկէրնովիցի։ Նոցա կայսերական Մեծութիւնների հետ գնում են հէսէնեան մեծ դուքսը իր աղջկայ, պրինցուհի Ելիզավետայի հետ։

ՍՕՖԻԱ. Ազգային ժողովը կը մտնվի կառավարութեան առաջարկութիւնը՝ առևտրական դաշնագիրը էլի մէկ տարով առանց փոփոխութեան երկարատևելու մասին։

ԴԱՐՄՇՏԱԴՏ. Լամզդորֆ ճանապարհ ընկաւ երէկ երեկոյեան։

27 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին Օգոստափառ երեխաներով և հէսէնեան մեծ դուքսը իր աղջկայ, պրինցուհի Ելիսաւետայի հետ հոկտեմբերի 26-ին ժամանեցին Սկէրնէվիցի։

ԲԵՐԼԻՆ. Կայսրը ենթարկվեց ձայնակապե-

րից պոլիպ հեռացնելու օպէրացիային։ Օպէրացիան կատարեց Շմիդաը և կատարելապէս աջող անցաւ։ Մինչև վերջի առողջանալը նորին մեծութեանը պատուիրած է միայն խուսափել խօսելուց։ Այսօր կայսրը ընդունեց զեկուցումով կայսերական կանցլերին։

ՖԼՕՐԵՆՑԻԱ։ Ներկայութեամբ դեսպան Նէլիդովի, ռուսական ընդհանուր հիւպատոս Ծովատպետ Վիրէնիուսի, ռուսական նաւատորմի ներկայացուցիչների, քաղաքացիական և զինուորական իշխանութիւնների և ռուսական կոլոնիայի անդամների հանդիսաւոր կերպով օրհնվեց ռուսաց նոր եկեղեցին։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Բուենոսարիլիա, պանամեան ջրանցքի ընկերութեան ֆինանսական գործակալներից մէկը, նշանակված է նոր պանամեան կառավարութեան գիպլոմատիական գործակալ Վաշինգտոնում։

ԲԵՐԼԻՆ։ Այսօրվայ բիւլլետէնը ասում է. «Վիլհէլմ կայսրը երէկվայ օրը հանգիստ անցկացրեց իր սենեակներում։ Քնած էր ամբողջ գիշերը առանց ընդմիջումների։ Փոքրիկ վերքի արտաքին տեսքը կատարելապէս գոհացուցիչ է։ Տաքութիւնը 36,3 է, զ սրկերակը՝ 60։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՅԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԷՐՄԱՆՆԱՆ
ԽՍԱՀԱԿ ՄԻԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ
ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ
Գինն է 1 բուբլի
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Редакція „Мурчъ“ և «Գուտենբէրգ» ու «Կենտրոնական» գրավաճառանոցներին։ 7—10

Լոյս տեսաւ
1904 թ. Մ. ՀՄՇԿԵԱՆԻ
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ
Կիլիկիոյ նորօծեալ կաթողիկոսի և հանգուցեալ տրբեպիսկոպոս Մելքիսեդեկ Մուրատեանի պատկերներով։
Հասցէն՝ Թիֆլիս Մակար Զմշկեան։ 8—10

ԱԿՆԱԲՈՑԺ
Յ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 6
Մատթեան փ. Աբովեանի տ. № 11 Ալէքսանդրեան այգու դիմաց։ 18—25

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ
ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Աշակերտաց համար.

1. Դասատետր կրօնի ա. տարի	. —	25
2. » » բ. »	. —	20
3. » » գ. »	. —	30
4. Հին-ուխտ դ. »	. —	35
5. Նոր-ուխտ ե. »	. —	40
6. Գործք առաքելոց զ. »	. —	40
Ուսուցչաց համար.		
7. Ուղեցոյց կրօնի—Հին-ուխտի (սպա.)	—	—
8. » » —Նոր-ուխտի	. 2—	5
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ.	1—	50
10. » » » Ե. »	—	50

Ինձ դիմողներն ստանում են 1. 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։
Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля 4 3) Книжный магазинъ „Гуттенбергъ“.
29—100 Սահակ քահ. Սահակեանց

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ
Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։ Բժշկում և լքնում է հիւանդ ատամներ, շինում է՝ անդամահատված ծնօտների պրոթեզներ (резекціонные протезы), արուհատական ատամներ, քիթ և քիմք։
Ընդունում է առաւօտեան 9—2 ժ.
երեկոյեան 5—8 ժ.
Հասցէն՝ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի, Эриванская пл. д. № 2, надъ аптек. магаз. Кавк. Тов.
(ջ. տ. կ.) 18—20

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ
Երեքշաբթի, հոկտեմբերի 28-ին, «Ֆրանչեսկա դի Ռիմինի» օպերայի յանախակի փոխների պատճառով՝ ներկայացում չի լինի։
Չորեքշաբթի, հոկտեմբերի 20-ին
Կը ներկայացվի
ՀՐԷՈՒՀԻ
Օպերա 5 գործ. երաժշտութիւն Հալեվի։
Մասնակցում են.—Տ. տ. Մելնիկովա, Կարտավինա։ Գ.գ. Դարսկի, Սելեսվին, Շմաեով, Կլիուզներ, Սանգուրսկի, Գրինով, Գավրիլով։
Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, հոկտեմբերի 28-ին,
Հայ թատերասէրները կը ներկայացնեն
„ՄՈՒԹ ՈՅՓԵՐ“
Դրամա 5. գործ. հեղ. Շեպժինսկու, թարգմ. Տէր-Գէորգեանի
Մասնակցում են՝ տ.տ. Տէր-Գրիգորեան, Մարջալեան, Ս. Զ. պ.պ. Տէր-Գրիգորեան, Վանչիր։ Խաչիկեան, Շահնազարեան, Այրիկեան, Դուլեան։
Սկիզբը 8½ ժամին։
Ներկայացումից յետոյ
ՊԱՐԵՐ
Տեղերի գները 1 բուբլուց մինչև 30 կոպ.
Հիւրերը մուտքի համար վճարում են 1 բուբլի։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, նոյեմբերի 2-ին
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Սկիզբը երեկոյեան 9 ժամին։
Պարտաւորական է դիմակներով լինել մինչև վերջը։ Հագուստի ձեր.—զինուորականները պէտք է լինեն իրանց տարազով հագուստով, քաղաքացիները՝ սև սիւրտուկով կամ ազգային շորերով։
Տոմսակները գանվում են շվեյցարի մոտ։ 1—3

Քաղաքային երկդասարանեան դպրոցը ստացած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
որոնում է գործակատարի, գրադրի կամ այլ պաշտօններ ձեռնատու պայմաններով։
Հասցէն—Полицейская ул., домъ Ханаева, Теръ-Григорянцу. 1—3

ԿԱՊՍԻԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ
(Cansules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում։

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յօդնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։
Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 28) 22—24

ՄԻ ՀԱՑՈՒՀԻ
ցանկանում է ունենալ դասեր՝ հայերէն, ֆրանսերէն և մուզիկա։ Կարելի է և քաղաքից դուրս։
Հասցէն՝ Общество учительницъ, Графской и троицкой уголъ. 5—6

Լոյս տեսաւ
ԳԵՐՃ ԳՈՇԵԱՆԻ
ՍՈՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ
վէպը, երկրորդ տպագրութեամբ
Գինն է 1 բ. 20 կ.
Նաև տպագրութեան են յանձնված նոյն հեղինակի «Հայի Խնդիր» և «Շահէն» վէպերը։
Դիմել հրատարակչին՝ Баку. Книжный магазинъ С. Д. Арутюнова. 3—7

ՊՐՕՄԷԹԷՈՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑՈՒՄ
վաճառվում են հետևեալ նոր գրքերը
Ի. Վազով վէպի տակ», վէպ բոլշարների կեանքից ազատութեան նախընթաց օրը, թարգ. Ց. Արբաղանի, գինը 80 կ.։
Ց. Դուրբախեան «Մանոթ պատկերներ» գինն է 75 կ.։
Ադոնց «Բամբեր գրական և արուեստ ա. գիրքը» գինն է 2 ր. 50 կ.։
Ս. Թառայեան «Շիլլէր Թանասեղծ Իդէալիստ» գինն է 3 ր.։
Գ. Բաշինջաղեան «Նկարչի Կեանքից Ցիշողութիւններ» գինն է 35 կ.։
Ա. Ահարոնեան «Մրրկի Սուրբը» գինն է 1 ր.։
Վ. Արծրունի «Աղջիկ» առողջապահական էսքիզ գինն է 60 կ.։
Պ Պռոշեան «Սոս և Վարդիթեր» վէպ բ. տպագր. գինն է 1 ր. 20 կ.։
Ռ Ֆ Ֆ ի «Ոսկի Աքաղաղ» գինն է 1 ր.։
Ս. Ռամալեան «Ճէն Թագաւորի Աղջիկը» հէքիաթ բ. տպագր. գինն է 25 կ.։
Գ. Ե. «Ապրելու Գաղտնիքը» գինն է 5 կ.։
Վ. Փափազեան «Վիշապ» 8 կոպ.։
Ղ. Աղայեան «Գաւակնբազարդ Այրբենարան» գինն է 13 կ.։
Աւ. Իսահակեան, «Բանաստեղծութիւններ», գինն է 1 ր.
Մարկ դը-Մ օնդֆ ո, «Աղմկայոյզ գործը», թարգմ. Ն. Տէր-Մանուէլեանի, գինն է 10 կ.
Ռաջբերուանի, «Հոգեկան տարօրութիւններ», արտատպած Ազգագրական հանդէսից, գ. 60 կ
1—3

ԷՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԷԱԳ

աճեցրի իմ արտասովոր երկար մազերս (185 սանտիմէտր երկար.), որոնք լիշեցնում են Լորէլէի մազերը,—չնորհիւ իմ հնարած պօմադայի 14-ամեայ գործածութեան։ Այս պօմադան ճանաչված է իբրը լաւ միջոց մազերի թափվելու դէմ, որ և մի և նոյն ժամանակ նպաստում է մազի բուսնելուն և նրա արմատները ամրանալուն. չնորհիւ այս պօմադայի տղամարդկանց մօրուքը ստանում է երկարութիւն, նոյնպէս բնական փայլ դէմի մազերի և մօրուքի վրա (մինչև անգամ պօմադայի կարճ ժամանակվայ գործածելուց յետոյ). միաժամանակ այս պօմադան պահպանում է մազերը վաղամայ ոչիտակելուց մինչև անդամ ծերութեան հասակում։
Սրուակի գինը 3, 5 և 8 բուբլի։
Հասանելիք դումարը ստանալուց յետոյ ամեն օր պօստով ուղարկվում են աշխարհի ամեն կողմերը հենց ֆաբրիկայից, ուր որ ուղարկվելու են պատուէրները։
ANNA CSILLAG
WIEN 1. Graben 14.
Գլխաւոր պահեստը Թիֆլիսում, Բաքում և Բաթումում դեղավաճառաց Կովկասեան Առևտրական ընկերութեան գլխաւոր պահեստներում։
2—26

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորքուս և վեներական տխուր ունեցող հիւանդներին։
Բիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ։
Ամենայն օր Առաւօտ. 12—2 ժ.
Երեկոները 5—6 ժ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի. № 20. Բախչիեվի դեղատան կից. Большая Ванкская ул. домъ Кузанова, № 20, рядомъ съ аптекой Бахчіева. 25—100

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել է հանքային ջրերից և վերակազմել է հիւանդների ընդունելութիւնը։ Գանձակայա փող. № 20, տ. Թամամշևի (Гановск. ул., д. Тамамшева, № 26).
Առաւօտեան 9—10½ ժամը
Երեկոյեան 5— 7 ժ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ.
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեղիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։
32—100

ԳՐԻԳՈՐԻՑ ՄԱՏՎԷԵՎԻՉ
ԻՕԽՎԷՊ
Ընդունելութիւն ատամների և բերանի խոռոչի հիւանդութիւնների, ատամ հանելու, բժշկելու, պլոմբ անելու, մաքրելու և արհեստական ատամներ շինելու։
Հասցէն՝ Михайловская ул., № 108, противъ Кирки։ Ընդունելութիւնը առաւօտեան 10-ից մինչև երեկոյեան ժամի 7-ը։ 3—30

ԾԱՂԿԵԱՅ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
„ՀՈՏԱՒԷՏ ԿԱԿԱՉ“
Գեղեցիկ սրուակում
ՇԱՏ ՀԱՃԵԼԻ ՀՈՏ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
4—6 (օ. 25, հ. 28, դ. 28, փետր. 25, ապ. 25, յուն. 25) (Метцль). 148, 168։

Մանկական պարտէզ, ուսումնարան եւ պանսիօն
Ս. Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
Բաքու
Օգոստոսի 15-ից տեղափոխվեց նոր բնակարան—Губернская ул. д. Бр. Красильниковыхъ, հայոց եկեղեցու մոտ։
Ընդունելութիւնը սկսված է։ 7—8

Дозволено Цензурою. Тифлисъ, 25 Октября 1903 г.
Электропечатня Груз. Жел. Т—ва, Б. Вельмская ул.